

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌՍՈՒՐԻ ԷՉՄԻԱԾԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՍԸ ՏԵՐ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ
(Սուրբ Էջմիածին, ապրիլի 5, 2015 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այսօր հրեշտակք յերկնից իջեալ
տան զաւետիս մարդկան.
յարեաւ խաչեալն եւ յարոյց
զծեզ ընդ ինքնեան»
(Շարական):

Սիրելի հաւատաւոր զաւակներ Մեր ի Հայրենիս եւ ի Սփիւռս,

Քրիստոսի հրաշափառ Յարութեան ուրախութիւնն է վերստին թեւածում մեր հոգիներում: Բերկրում ենք իւղաբեր կանանց նման, ովքեր թափուր տեսան Փրկչի գերեզմանը եւ հրեշտակներից լսեցին Նրա Յարութեան աւետիսը: Ցնծում ենք վերնատանը հաւաքուած առաքեալների եւ Էմմաուսի ճամփորդների պէս, որոնց յարուցեալ Տէրը երեւաց եւ փարատեց նրանց տարակոյսներն ու տրտմութիւնը: Յարութեան լոյսի շողերով այլեւս լուսաւորուած է խաւարեալ երկինքը, թոթափուած են խաչելութեան վիշտն ու տխրութիւնը: Բացուած է դրախտը եւ խորտակուած է դժոխքը, պարտուած է մահը եւ յաղթանակած՝ կեանքը:

Քրիստոս՝ Փրկիչ մեր Տէրը, խաչի վրայ Իր գոհագործութեամբ եւ հրաշափառ Յարութեամբ մարդկութեան համար դարձաւ փրկութեան պատարագ, որ բաշխուում է ամենուր՝ հաւատքով ընդունողներին: Տէրունական անգին փրկագործութիւնը Երկնից արքայութիւնը ժառանգելու շնորհին է արժանացնում հաւատացեալ հոգիներին, ինչպէս եւ շարականագիրն ասում է. «Յարեաւ խաչեալն եւ յարոյց զծեզ ընդ ինքեան»:

Մեր ժողովրդի ընթացքը պատմութեան հոլովոյթներում յաճախ եղաւ նմանութիւն Քրիստոսին: Յաճախ չարչարանաց Գողգոթա բարձրացանք, խաչակից եղանք Տիրոջը եւ Նրա Յարութեան հաւատքով յարութիւն առանք: Տիրոջ շնորհով մեր ժողովուրդը յաղթահարեց իր դէմ մոլեգնած դաւերն ու աւերները, հալածանքներն ու կոտորածները եւ վառ պահեց յոյսը իր վերածննդի, իր ապահով ու լուսաւոր կեանքի:

Քրիստոսի Սուրբ Յարութեան լուսապայծառ տօնի այս հիասքանչ օրը մենք աղօթում ենք նաեւ Ցեղասպանութեան մեր նահատակների համար: Մէկ դար առաջ էր, երբ մեր ժողովրդի զաւակները հայ եւ քրիստոնեայ լինելու համար անլուր

տառապանքներով Յեղասպանութեան ենթարկուեցին: Նրանք նահատակութեան պսակն ընդունեցին առաքելալի խօսքի ճշմարտութիւնն ունենալով իրենց սրտում. «Եթէ մեր այս հողեղէն տունը, որ մեր մարմինն է, աւերուի, Աստուծոց շինուած անձեռակերտ յաւիտենական տուն ունենք երկնքում» (Բ Կորնթ. Ե 1): Աշխարհին, ողջ մարդկութեանը մեր ժողովուրդը իր նահատակութեամբ եւ իր յարուցեալ կեանքով վկայեց յարութեան հրաշքի ճշմարտութիւնը: Եղանք խաչեալ, եղանք վշտահալած, բայց ոչ յուսահատ, վիրաւոր, բայց ոչ տկար, աշխարհասփիւռ, բայց ոչ անհայրենիք: Կորուսեալ հայրենիքի սէրը սրտում՝ մեր ժողովուրդը պատմական Զայաստանի արեւելեան հատուածում վերակերտած պետականութեան ներքոյ եւ սփիւռքի համայնքներում նոր կեանք վերընծիւղեց՝ հաւաստելով, որ իր կենաց ծառը՝ հաւատքի անսասան վեմին արմատացեալ, կենսատու զօրութեամբ պտղաբերում է եւ ազգն ու հայրենիքը շէնացնող զաւակներ ծնում:

Զայոց Յեղասպանութեան համընդհանուր ճանաչման ու դատապարտման համար մէկ դար պայքարեցինք եւ շարունակում ենք պայքարել՝ արդարութեան յաղթանակի հաւատով: Աշխարհը երբեմն լսեց մեզ, երբեմն անտեսեց, որովհետեւ միշտ չէ, որ ունկնդիր է եւ հաւատարիմ Քրիստոսի բերած խաղաղութեան եւ մարդկանց մէջ հաճութեան պատգամին, ի հետեւանս որի՝ մարդկութեան նորագոյն պատմութիւնը կրկին մթագնեց նոր ցեղասպանութիւնների եւ պատերազմների խաւարով: Այսօր էլ մարդկային կեանքն ալեկոծուում է հակամարտութիւններով ու արիւնահեղութիւններով: Մարդկութեան օրրան Երկիր մոլորակի վրայ տենչալի խաղաղութիւնը եւ համընդհանուր հաճութիւնն ու համերաշխութիւնը տակաւին մնում են որպէս չիրականացուած երազանք: «Աստուած մահ չի ստեղծել, եւ Նա չի ուրախանում ողջերի կորստեան համար», - ուսուցանում է աստուածաշնչեան իմաստութիւնը (Իմաստ. Ա 13): Աւելին՝ խաչեալ եւ յարուցեալ Իր Միածին Որդու միջոցով Աստուած պարգեւել է շնորհը մահուանից յառնելու, որը պարտաւորեցնում է ազգերին եւ պետութիւններին միասնական ու միահամուռ կամք դրսեւորել՝ կանխելու համար մարդկութեան խաղաղութիւնն ու բարօրութիւնը վտանգող սպառնալիքները, առաւել նախանձախնդիր լինելու արդարութեան ու ճշմարտութեան հաստատման, եղեռնագործութիւնների համընդհանուր դատապարտման գործում, այլապէս աշխարհի չարաղէտ ընթացքները պիտի շարունակեն առաջնորդել դէպի նոր ողբերգութիւններ: Մարդկութիւնը պարտք ունի սրբելու աշխարհում ծովացող արցունքը, լուսաւոր մանկութիւն երագող որբ ու կարոտեալ երեխաների անօգնական հայեացքների, լաց ու ճիչի առջեւ լռեցնելու որոտները մահաբեր գէնքերի, արմատախիլ անելու աղքատութեան չարիքը: Խաչելութիւնն աշխարհում պետք է յաղթահարուի եւ փոխարինուի յարութեամբ:

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ, այսօր, երբ ունկնդիր ենք «Յարեալ խաչեալն եւ յարոյց զձեզ ընդ ինքեան» աւետիսին, քաջալերուենք հոգով, ապրենք որպէս Քրիստոսի հետ մահից վեր յառնած ժողովուրդ, Քրիստոսին հաւատարիմ եւ յարութեան զօրութիւնն ունեցող ժողովուրդ: Դիմագրաւենք մեր կեանքի մարտահրաւերները եւ նեղութիւնների ու դժուարութիւնների չարչարանաց մեր խաչը ծաղկեալ դարձնենք բոլորանուէր մեր ջանքերով, հայրենամուկիրումի ու ազգանուկիրումի նոր գործերով: Ազգային, պետական, հասարակական մեր կեանքը, հոգեւոր-եկեղեցական մեր անդաստանը շէնացնենք «զի Աստուած ընդ մեզ է»

աներկբայ հաւատով եւ քայլենք դէպի վերելքի նոր հորիզոններ եւ դէպի յաղթանակը մեր արդար դատի:

Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնի խնդութիւնը Մեր հոգում` Մեր բարեմաղթանքներն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին` Ն. Ա. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սուրբաֆեանին, քոյր Եկեղեցիների շնորհազարդ հոգեւոր Պետերին:

Մեր Տիրոջ հրաշափառ Յարութեան ակտիսով ողջունում ենք Սուրբ Պատարագի արարողութեանը ներկայ` Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Սերժ Սարգսեանին եւ առաջին Տիկնոջը, ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակո Սահակեանին, հայոց պետական ակադեմիան` մաղթելով արգասալի ծառայութիւն եւ նոր ձեռքբերումներ` յանուն մեր երկրի հզօրութեան եւ մեր ժողովրդի բարօրութեան ու առաջընթացի: Մեր բարեմաղթանքները և օրհնութիւնն են բերում այստեղ ներկայ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Նախագահ տիար Պերճ Սեդրակեանին և Միութեան անդամներին, ովքեր հայրենիքում անցկացնում են Միութեան տարեկան համագումարը: Սուրբ Յարութեան ակտիսով Մեր օրհնութիւնն ենք բերում Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների եւ միջազգային կազմակերպութիւնների դեկավարներին ու ներկայացուցիչներին` մաղթելով գործոց յաջողութիւններ` ի խնդիր մեր երկրների բարեկամութեան ամրապնդման եւ գործակցութեան զօրացման:

Քրիստոսի Յարութեան տօնի առիթով շնորհաւորում ենք հաւատաւոր Մեր զաւակներին ի սփիւռս աշխարհի եւ մեր Սուրբ Եկեղեցու ուխտեալ սպասաւորներին` բերելով Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը եւ հայցելով զօրակցութիւնն ու ամենառատ շնորհները յարուցեալ մեր Փրկչի:

Աղօթում ենք, որ Ամենակալն Աստուած Իր անսահման ողորմութեան ներքոյ պահպանի աշխարհը համայն, զօրացնի մարդկանց սրտերում խաղաղութեան, արդարութեան ու ճշմարտութեան հոգին եւ օրհնի ապահով ու երջանիկ կեանք կառուցելու մարդկային ջանքերը: Մեր հայցն ենք բարձրացնում երկինք, որ Տէրը խաղաղ պահի մեր հայրենիքը, հաւատքով պայծառ եւ ոգով արի` աշխարհասփիւռ մեր ժողովրդին եւ Իր կենարար շնորհներով առաջնորդի ընթանալու դէպի կեանքի լուսաւոր հորիզոններ:

Թող յարուցեալ Տիրոջ սէրը եւ խաղաղութիւնը լինեն մեզ հետ` այսօր եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Քրիստոս յարեալ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի: